զի ցանկայողք ի նոցունց՝ փութասցին ի ժամանակին հասանել ի Մայր Աթոռս և հաղխասուես գտանելով օրհնութեան Իւղոյն Սրբութեան հոգևորապէս վայելել զշնորհարաշխութիւն Նորին և մխիթարիլ ըստ պանծալի օրինակի արժանայիշատակ և բարեպաշտ նախնեաց մերոց։

—

Ի ՅՈՒՆՎԱՐ ԱՄՍՈՑ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

Գեր. Վահրամ եպիսկոպոս Մանկունի իւր ծանուցեալ գործի համար անցեալ Նոյեմբերի 14-ին յանուն Վեհափառ կաթուղիկոսի յայտարարութեամբ խնդրել էր մի վախճանական ելք։ Վեհափառ կաթուղիկոսը այս յայտարարութիւնը Նոյեմ. 23-ին թ. 158 յանձնեց Սինօդին մակագրելով «Ցանձնեմք ի շուտափոյթ և ի վախճանական անօրէնութիւն Սինօդին Սրբոյ Էջմիածնի»։

Սինօդը ի պատասխանի մակագրութեան Վեհափառ կաթուղիկոսի ի 13-ն անցեալ Դեկտեմբերի յայտարարութեամբ առ Վեհափառ Կաթուղիկոսն յայտնումէ գործի հանգամանքը և խնդրումէ Նորին Վեհափառութեան անօրէնութիւնը, մանրամասնելով Գեր. Վահրամ եպիսկոպոսի գործը ըստ այսմ։

Հանգուցեալ ի Տէր Գէորգ Դ. կաթուղիկոսի մահից յետոյ Սինօդի անդամք Վեհարանի կայքը և հանգուցեալ Հայրապետի գոյքը ըստ օրինաց ցուցակագրելիս՝ շատ սակաւ բան են գտնում քան որ ակնկալումէին, նա մանաւանդ ի նկատի ունելով հանգուցեալ Հայրապետի խօսքը թէ, ինքն իւր հաստատած ձեմարանը ապահովել է նիւթական կողմից. ուստի և Սինօդը 1882 թ. Դեկտ. 20-ին և 23-ին կայացրած օրագրութեամբ մի մասնաժողով է կարգում Սինօդի անդամ Գեր. Երեմիա եպիսկոպոսի նախագահութեամբ խուզարկելու գողոնը՝ կասկածելով Գեր. Վահրամ եպիսկոպոս Մանկունու, որ Հանգուցեալ Հայրապետի քարտուղարն էր, Պ. Ստեփան Դէմիրճեանի, որ Վեհարանի անտեսական մասն էր կառավարում և այլ ծառայից վերայ։ Սինօդը ըստ օրինաց և եկեղեցական կանոնաց անվաւեր է համարում Վեհարանի իրեղէնքը ցուցակագրելիս երևեցած «կատակաձև» վերնագրով թուղթը՝ որում՝ որպէս թէ Հանգուցեալ կաթուղիկոսը յայտնումէր թէ, ոչինչ գոյք և կայք չունի։

Ցանձնաժողովը չէ կարողացել ակնկալած արդիւնքը յառաջ բերել, որովհետև հարկաւոր տեղեկութիւնները արքունի պաշտօնատները (փոստային վարչութիւն և ոստիկանութիւն) չեն տուել՝ պատճառելով թէ ըստ օրինաց՝ միայն դատաստանական քննիչը կարող է ստանալ տեղեկութիւններ։ Իսկ Սինոդի անդամք մինչ կամենումէին խուզարկել Գեր. Վ.հրամ եպիսկոպոսի սենեակը, նա ինքնին իւր մօտ եղած թէ գոյքերը և թէ արժէթղթերը ցուցակով յանձնումէ, որոնք զրվումեն Գանձարանը մինչև գործի վախճանը։

Կ. Պոլսոյ պատրիարքը 1883 թ. Յունվարի 18-ին գրութեամբ՝ այս մասին տեղեկութիւն է խնդրում Սինոդից, իսկ Սինոդը խոստանում է պատասխանել՝ երբ կը յաջողի հետևանքի հասնել։ Առ միջնորդութիւն Ամեն. Յարութիւն պատրիարքի յանուն Սինոդի գրութեամբ ի 25 Յուլիսի 1885 ամի, որով Նորին Սրբազնութիւնը խնդրումէր թոյլ տալ Գեր. Վ.հրամ եպիսկոպոսին վերադառնալ հայրենիք կազդուրուելու, Սինոդը անցեալ Հոկտ. 10-ին գրութեամբ յայտնումէ Նորին Ամենապատուութեան թէ, որովհետև Վ.եհափառ Կաթուղիկոսի գալուստը մօտ է, Սինոդը Նորին Վ.եհափառութեան Ամենապատուութեամբ լուծումն կը տայ գործին։

Վ.եհափառ կաթուղիկոսը կոնդակով ի 20ն Դեկտեմբերի 1885 ամի համար № 234, ինկատի ունելով որ Հանգուցեալ կաթուղիկոսի յափշտակուած գոյքը խուզարկելու և գտնելու համար կարգուած Ցանձնաժողովը իւրովի դարդ ոչինչ չէ կարողացել անել, իսկ քաղաքական իշխանութեան ձեռքով տեղեկութիւններ քաղելը և գործը վարելը թերևս անախորժութիւններ յառաջ բերէ, պատուիրումէ Սինոդին յանձնել Վ.հրամ եպիսկոպոսին Նորանից ստացած արժէթղթերը, եթէ արժեթղթոց Հանգուցեալ Կաթուղիկոսին պատկանելու փաստ կամ ապացուցութիւն չունի. ուստի և Նորին Վ.եհափառութիւնը եզրակացնումէ պատուիրելով «Վասն որոյ առաջադրեմք Սինոդիդ Սրբոյ Էջմիածնի վերադարձուցանել նմա (Վ.հրամ եպիսկոպոսի) օրինաւոր ցուցակաւ զյիշեալ արժէթուղթսն, զստացուածս և զգոյս եղեալս ի պահեստի ի գանձարանի դորին. իսկ զյանցաւորն և զմեղսակիցսն ի գործս յափշտակութեան գոյից և ստացուածոց Հանգուցեալ Հայրապետին յանձնելով ի դատ ծածկագիտին Աստուծոյ, զՎ.հրամ եպիսկոպոսն արձակել ի հայրենիս իւր, և այսու աւարտ տալ անա-

խորժ գործոյս, զոր ընդ սմին վերագարձուցանեմք ի Դոյն »։

Ուստի և Սինոդը օրագրութեամբ ի 27-ն անցեալ Դեկտմ. վերջ է տալիս գործին վերադարձնելով Դեր. Վահրամ եպիսկոպոսին նորա արժէթղթերն ու գոյքը, և տալիս է վկայական ու անցաթուղթ Տաճկաստան գնալու համար։ Դեր. Վահրամ եպիսկոպոս, որովհետև եպիսկոպոսական թագ շինել տալու անունով քահանայացուներից 1300 բուբլի գրամ էր առացել, բայց ոչ գրամը և ոչ թագերը յանձնել էր ում հարկն է, Վեհափառ Կաթուղիկոսը ի նկատի ունենալով այս մասին Սինոդի յայտարարութիւնը ըստ օրագրութեան ի 18-ն Դեկտմ. անցելոյ, հաճեցաւ կոնդակով ի 23-ն նոյն Դեկտեմբերի առաջադրել Սինոդին ըստ այսմ. «Առաջադրեմք՝ առուգիւ տեղեկանալ, զի թէ զվերոյգրեալ գումարն ցայսօր ժամանակի, չիցէ առաքեալ յիշեալ եպիսկոպոսն առ թագաշէն Կ. Պոլսեցի Յուստինէ կոյսն ի Տփխիս՝ յայնժամ առանալ կանխաւ զգումարն զայն յարժէթղթոց նոյն եպիսկոպոսի՝ զորս Սինոդդ յանձնել ունի նմա ըստ զօրութեան առաջադրութեան մերոյ ի 20 Դեկտմ. ընդ համարաւ 234»։

Առ պահանջ Սինոդի՝ Դեր. Վահրամ եպիսկոպոսը յայտարարութեամբ ի 26-ն Դեկտեմ. անցելոյ վերջին պարբերութեամբ գրում է. «Արդ պարտաւոր եմ հնազանդել բարեհաճ անօրէնութեան և հրամանի Վ.Հ. կաթուղիկոսի ազգիս, միանգամայն տալ շարունակել զշինութիւն թագից կամ վերադարձուցանել ի Գանձարան Մայր Աթոռոյ զգրամանն՝ յորժամ ներեսցեն միջոցք իմ»։

Սինոդը ըստ կոնդակի Վ.Հ. կաթուղիկոսի Դեր. Վահրամ եպիսկոպոսի գոյքը ցուցակաւ յանձնելիս՝ ի տեղի յիշեալ գրամոց՝ վեր է առնում 8 հատ հինգհարիւրական ֆռանգնոց միճակաւոր պարտատոմս (արլեգացիա) 1875 թուականի՝ Փարիզու 4% փոխառութեան։ Իսկ Դեր. Վահրամ եպիսկոպոսը ստորագրութեամբ իւր գոյից ցուցակի տակը պարտաւորվում է որ, եթէ յընթացս մի տարւոյ գրամը չը յանձնէ Սինոդին, Սինոդը իրաւունք ունի գրաւել յիշեալ արժէթղթերը։ Ուստի և Սինոդը ի 17-ն Յունվարի տարւոյս օրագրութեամբ կարգադրում է յիշեալ 8 հատ արժեթղթերը դնել Գանձարան, և եթէ յընթացս տարւոյն Վահրամ եպիսկոպոսը չի յանձնել Սինոդին թագերի փողը՝ Սինոդը կրգրաւէ արժէթղթերը։ Եւ այսպէս վերջ է առնում Դեր. Վահրամ եպիսկոպոսի գործը։

ՎԱՐՇԱԿԱՆՔ·

31· Սինոդը ըստ թախանձանաց Ասխապատու Հայոց և ըստ միջնորդութեան Կոնսիստորիային Շամախւոյ կարգեց Շամախւոյ Գրիգոր քահանայ Յովսէփեանին Ասխապատու և Կրաանովգսկւոյ Հայոց ծիսական քահանայ, իսկ ըստ խնդրոյ հասարակութեան Բաքւոյ և միջնորդութեան Շամախւոյ Կոնսիստորեային՝ Շամախեցի քահանայորդի Վարդան Տէր Վարդանեանցին հրամայեց ձեռնադրել Բաքւոյ քահանայ։

—

20· Սինոդը օրագրութեամբ Սինոդի անդամ Արժ· Մամիրէ վարդապետ Սանասարեանին կարգեց վերատեսուչ կամ կարասեաց Վեհարանի և Հանդերձատան Մայր Աթոռոյս։

—

ԳԱՏԱՍՏԱՆԱԿԱՆՔ·

31· Սինոդը Աստրախանու Յովսէփ քահանայ Բէկնազարեանին ենթարկեց 15 օրեայ առանց փիլոնի դասից դուրս ապաշխարութեան, նորա՝ իւր ծուխը չեղող աստիճանաւոր Սիմէոն Աթաբէկեանի նորածին աղջիկը մկրտելու, և ի տեղի իսկական կնքահօր՝ ուրիշին անունը Մետրիքականում գրել խոստանալուն համար։

—

31· Սինոդը պատուիրեց Թիֆլիզու Կոնսիստորեային իւր 1884 թուի Հոկտեմբերի 29-ին կայացրած վճիռը ի գործ դնել՝ Դուշէթու Աղէքսանդր քահանայ Տէր Յովհաննիսեանին կարգելով գիւղօրէից քահանայ։

—

20· Սինոդը հաճեցաւ վերահաստատել Շուշւոյ Կոնսիստորիայի վճիռը յօգուտ Շուշւոյ դպրանոցին Հադրութի Բարսեղ քահանային ենթարկելով 20 ռբլ· իսկ Սահակ քահանային՝ 25 ռուբլի տուգանքի, որովհետև նոքա դիդմամբ Բարսեղ քահանայի որդու ծնունդը իսկական ժամանակին չէին գրել այլ յետ ձեռնադրութեան հօրն։

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ·